պատճառ մը չեն հանդիսացած ազգային բաժանումներու։ Արևելեան հնաւանդ մոլեռանդութիւն մի է այն, զոր պէտք է միանգամ ընդ միշտ արմատախիլ ընել մեր մէջէն, և քիչ մը լաւատես մտօք, լայնատես աչօք դիտել գործերը. կրօնք և ազգութիւն չշփոթել, իւրաքանչիւրին ուրոյն պարտականութիւնները ճանչնալ և ըստ Աւետարանին տալ զկայսերն՝ կայսեր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ»։

ԴԵՐԱՍԱՆ Վ.ՐՈՑՐԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ 25-ԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԸ

Գրական ասպարէզի մէջ ծանօթ ու բեմական գործունէութեամբ արդիւնաշատ Վ.ոյրի 25ամեակն ներկայ տարուան յունուար 18ին կատարուած է Նիկիտին եղբայրներու Ցիրկ թատրոնին մէջ։ Ըստ Հովիս թերթին յունուար 25 թիւին։

«Պ. Վ.ոյրը հայ հասարակութեան վաղեմի բարեկամն է։ Նրա քառորդ դարի անխոնջ և եռանդուն բեմական գործունէութիւնը, որ կապուած է եղել այնքան դժուարութիւնների և զրկանքների հետ, մեզ շատ ու շատ անգամ է ոգեորել։

Վ.ոյրը մէկն է եղել թատրոնին անկեղծ նուիրուած այն սակաւ գործիչներից, որ համեստ ու առանց որևէ ըէկլամի, յանախ քաղցած ու ծարաւ և հաւատարիմ յամառութեամբ տարել են իրանց խաչը։

Հայ բեմի գոյութիւնը Վ.ոյրի նման չարքաշ աշխատաւորներն են ապահովել։

Բազում հայ հասարակութիւն՝ նրա հետ և ամբողջ հայ ժողովուրդը՝ իր յարգանքն է արտայայտել պ. Վ.ոյրին Բազումս։

Թիֆլիզի հայ հասարակութեան բարոյական պարտքն է նոյնպիսի ջերմ զգայմունքներով նորոգել իր յարգանքն ու երախտիքը հայ բեմի տաղանդաւոր ու անխոնջ մշակին»։

Ասոյգն ըսելով՝ Վ.ոյր լիուլի չէ վարձատրուած հայ հասարակութենէն։ Սակայն վեհաձն մարդը իւր սիրած ազգին ծառայ ըլլած է իր բոլորանուէր աշխատանքը։

ՏԻԿԻՆ ՍԻՐԱՆՈՅՇԻ

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ 35-ԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԸ

Հայութեան պատուաբեր թատերախաղ հռչակաւոր Տիկնոջ բեմական գործունէութեան հանդէսը, ըստ կովկասահայ թերթերու, մեծ խանդավառութեամբ տօնուած է Պաքուի «Ցիրկ» թատրոնին մէջ։ Արդիստ դերասանուհոյ մասին 1906ի մեր ԳԵՂԱՐՈՒՆԻՆ մէջ ընդարձակօրէն գրուած է «ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻ ՏԻԿԻՆ ՍԻՐԱՆՈՅՇ, Իր հասարակական գործունէութեան 30ամեակի առթիւ», վերնագրի տակ։

Աւելորդ համարելով երկրորդել մի անգամ հրատարակուածը կը գոհանանք ըսելու որ այս տարուան յունուար 24ը (Ն. Տ) իրաւամբ յաղթանակի և վարձատրութեան օր մը եղաւ տաղանդաւոր Տիկնոջ համար։ —

Ցորելեանական յանձնաժողովը՝ Տ. Սիրանոյշը յաղթական կամարներու տակէն անցընելով առաջնորդած է թատրոն որ բիւրաւոր ելեկտրական լամպերներով, ծաղիկներով, կանաչագեղ ոստերով, գոյնզգոյն դրաւանգներով զարդարուած ըլլալէ զատ, բոլոր օթեակները և աթոռները բազմաթիւ հանդիսականներէ բռնուած էին։ Հանդէսը թատերական ներկայացումներով կը սկսի, և Տիկին Սիրանոյշ՝ նոյն խաղերուն մէջ Տոսկայի և Մագդայի դերերը կը կատարէ ամենայաջող կերպով։

Տիկին Հրաչեայ դերասանուհին Սիրանոյշի Մենտորն ըլլալով, կ'առաջնորդէ իր ձեռասունը բեմ ուր հրեշտակներ լեռնէ իջնելով կը բերեն դափնի պսակ մը։ Մանօթ դաստիարակուհին, Սիրանոյշի բեմական գործունէութեան սկզբնաւորութեան միջոց ցուցած յարատեւութիւնը և յառաջադիմութիւնը, և այլն, ջատագովելէ յետոյ, յաղթանակի պսակը կը զետեղէ անոր գլխուն վրայ։ Ապա ծաղկեզարդ մեծդի շրջանակ մը բերուելով՝ Հայութեան պատուաբեր Դերասանուհին կը կանգնեցնեն անոր մէջ, ու 60է աւելի թատերական ընկերութիւններու այլ և այլ պատուիրակները ճառեր կ'արտասանեն, ուղերձներ կը

digitised by A.R.A.R.@